ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 267
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ (Աղբերք բնակավայրի գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքը (Աղբերք բնակավայրի մասով) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Գեղարքունիք-7 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
05-009-0267-0035, 05-009-0267-0041, 05-009-0267-0042 կադաստրային ծածկագրերով 0.0144 հա, 0.0144 հա, 0.0225 հա մակերեսներով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող, խոտհարք	05-009-0267-0035, 05-009-0267-0041, 05-009-0267-0042 կադաստրային ծածկագրերով 0.0144 հա, 0.0144 հա, 0.0225 հա մակերեսներով էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների էներգետիկայի հողեր

1. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

2. Ճամբարակ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Աղբերք բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի (Աղբերք բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե. Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, «28» «հունիսի» 2024 թ.